ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԵՆՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ, ՄԱՐԳՈ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Շուրջ երեք հարյուր տարի է անցել այն ժամանակից, երբ առաջին անդամ գիտական շրջանառության մեջ մտցվեց Կիլիկյան հայկական դրամի վերաբերյալ անդրանիկ տեղեկությունը[1]։ Անցած ժամանակաշրջանում տարբեր երկրների հայ և օտար գիտնականները մանրամասն ուսումնասիրել են Կիլիկյան հայկական պետության դրամագործության հետ առնչվող բազմաթիվ հարցեր։ Համեմատաբար լավ են ուսումնասիրված Կիլիկյան թագավորների թողարկած դրամների տեսակները՝ իրենց տարբերակներով, ինչպես և՝ դրամակշռային սիստեմների, դրամահատարանների հարցը, դրամների անվանումների ճշտումն ու բացահայտումը, անգամ՝ դրամների մետաղների տոկոսային հարաբերությունը և այլն։ Սակայն Կիլիկյան դրամների շրջանառության և տարածման հարցերը գրեթե դուրս են մնացել ուսումնասիրողների հետաքրքրությունների շրջանակներից և այդ իրողությունը ունի իր պատճառները։ Կիլիկիան ունենալով բարենպաստ աշխարհագրական դիրք, առևտրական ուղիներով կապված է եղել շատ երկրների հետ։ Ահա թե ինչու պատմաբանները առավել ուշադրություն են դարձրել առևտրական ճանապարհների ուղղությունների ճշտմանը, ապրանքափոխանակության, վաճառականների գործունեության, գնացուցակների պարզաբանմանը։

Ինչպես հայտնի է, դրամագործությունը Կիլիկիայի հայկական պետությունում դրված էր բարձր հիմքերի վրա։ Նրա տասնչորս տիրակալները թողարկել են տարբեր արժեքների արծաթյա, պղնձյա և ոսկյա դրամներ, որոնք մեծ ընդունելություն ունեին միջազգային շուկայում։ Այնուամենայնիվ Կիլիկյան հայկական պետության դրամաշրջանառությունը, նրա տարածման շրջանակները դրամագետները ներկայացրել են ընդհանուր գծերով։ Այս տեսանկյունից բոլորովին պարզաբանված չեն Կիլիկյան հայկական պետության և Հայաստանի կապերը դրամագիտական տվյալներով։ Մինչև վերջերս դրամագիտական գրականությունում այդ կապերի իրողությունը մերժվում էր։ Բացարձակապես ժխտվում էր նաև Կիլիկյան հայկական դրամների տարածումը Անդրկովկասում։ Այսպես՝ Խ. Մուշեղյանը «Դրամական շրջանառության ծագումն ու զարգացումը Հայաստանում մ. թ. ա. V—մ. թ. XIV դդ.» հոդվածում, համառոտակի ներկայացնելով Կիլիկիայի դրամագործության պատմությունը, վերջում ավելացնում է. «սակայն կարևոր է, որ Մայր Հայաստանում Կիլիկիայի հայկական պետության դրամները շրջանառության մեջ չեն եղել։ Հայաստանում և հարևան երկրներում կիլիկյան դրամներ կամ գանձեր չեն գտնվել։ Առևտուրը տարել է նրանց միջերկրական, փոքրասիական, սիրիական, բալկանյան և իտալական շուկաները»[2]։

---

1 *Կիլիկյան հայկական դրամների մատենագիտական տվյալների մանրամասն տեղեկությունները տե՛ս Զ. Պոուկյան, Կիլիկյան Հայաստանի դրամները, Վիեննա, 1963։*

2 *«Հայ դրամագիտության հանդես», 1977, հ. 3, № 1, էջ 3։ Նույն միտքը Խ. Մուշեղյանը հայտնում է նաև իր մյուս աշխատություններում [տե՛ս* Денежное обращение в античной и средневековой Армении по нумизматическим данным (V в. до н. э.—XIV в. н. э.), Автореферат докторской диссертации, Ереван, 1975, с. 54*]։ «Դրամական շրջանառությունը Հայաստանում մ. թ. ա. 5-րդ-մ. թ. 14-րդ դդ.» (Երևան, 1983) գրքում կիլիկյան հայկական դրամների վերաբերյալ գրում է միայն ռուսերեն ամփոփման մեջ՝ հայտնելով գրեթե նույն կարծիքը (էջ 262)։*

Ալիշանը[3], Հ. Մանանդյանը[4], Գ. Միքայելյանը[5] և ուրիշներ իրենց մենագրություններում մանրամասն ավել են Կիլիկյան հայկական պետության և Հայաստանի միջև ունեցած առևտրական կապերի պատմությունը, ներկայացրել առևտրական ճանապարհների ուղղությունները, Կիլիկիայից Հայաստան բերվող և Հայաստանից Կիլիկիա արտահանվող ապրանքների տեսակները և այլն։ Այնպես որ, տրամաբանորեն առևտրական այս բուռն կապերը չէին կարող չուղեկցվել նաև դրամների փոխանակությամբ։

Հայաստանի պատմության պետական թանգարանի դրամագիտության բաժնում պահվում է Կիլիկյան հայկական դրամների բազմաբովանդակ ժողովածու, որի մեջ ընդգրկված են նաև Հայաստանի տարածքից հայտնաբերված դրամները։ Այս դրամները քանակով շատ չեն, սակայն որոշ չափով նպաստում են խնդրի պարզաբանումը որոշակիացնելու համար։ Բացի այդ, ներկայացվող նյութը հետագայում կօգնի առավել ուշադրություն դարձնելու հնագիտական շերտերից հայտնաբերված դրամների հավաքմանը ոչ միայն Սովետական Հայաստանից, այլև Անդրկովկասի տարածքից և նրա սահմաններից դուրս։

Ներկայացվող վեց դրամները գտնվել են պատմական Հայաստանի հինգ վայրերից՝ Անի, Ամբերդ, Մեծամոր, Մեղրի, Նախիջևան։

Դրամների նկարագրությունը[6].

1. Լևոն Ա. (1198—1219). արծաթյա դրամ, քաշը 2,87 գ., տր. 20 մմ.։ Գտնվել է Մեղրի քաղաքի տարածքից։ Հանձնվել է Հայաստանի պատմության պետական թանգարան 1929 թ. օգոստոսի 25-ին (գույքամատյանի № 5310)։

ԼԵՒՈՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅ
ԿԱՐՈՂՈՒԹԻՆ ԱՍՏՈ

(Պտուկյան, № 621)[7]

2. Հեթում I (1226—1270). պղինձ, դանգ, քաշը 4,90 գ., տր. 27 մմ.։ Գտնվել է Ամբերդի պեղումների ժամանակ 30-ական թվականների կեսերին (արշավախմբի ղեկավար՝ Հովսեփ Օրբելի)։ Դրամը Ամբերդի պեղումներից հայտնաբերված նյութերի հետ, 1962 թ. Լենինգրադի պետական Էրմիտաժից հանձնվել է Հայաստանի պատմության պետական թանգարանին (գույքամատյանի № 17917/45)։

[Հ]ԵԹՈՒՄ ԹԱ[Գ]ԱՒՈՐ Հ[ԱՅՈՑ]
[ՇՆԵԱԼ] [Գ]ԱՂԱԳՆ Ս[ՒՍ]

(Պտուկյան, № 1296)

3. Լևոն II (1270—1289). պղինձ, քարտեզ, քաշը 2,83 գ., տր. 21 մմ.[8]։

---

3 Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885։

4 Հ. Մանանդյան, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, Երևան, 1930։

5 Г. Г. Микаелян, История Киликийского армянского государства, Ереван, 1952.

6 Նկարագրությունները տրված են ըստ տիրակալների թողարկումների ժամանակագրության։

7 Այստեղ և հետագայում դրամների համեմատական որոշումը տրված է ըստ Զ. Պտուկյանի կորպուսի հերթական համարի (տե՛ս Զ. Պտուկյան, նշվ. աշխ.)։

8 Հայտնում ենք մեր շնորհակալությունը Մեծամորի հնագիտական արշավախմբի ղեկավար Էմմա Խանդաղյանին՝ դրամը այս հրատարակությանը տրամադրելու և հայտնաբերման պայմանների վերաբերյալ տեղեկություններ հայտնելու համար։

Գտնվել է 1983 թ. Մեծամորի պեղումների ժամանակ, բլրի ամենաբարձր գագաթի միջնադարյան հատակին գտնվող թոնրի մոտ[9]։ Դրամը պահվում է Մեծամորի պատմահնագիտական թանգարանում։ Այն խիստ մաշված է, սակայն բավական հստակ երևում է առաջին երեսին պատկերված, դեպի ձախ շարժվող, առյուծի ոճավորված պոչը և գրությունից հետևյալը՝ [Լ]ԵՒՈՆ ԹԱ...

Երկրորդ երեսի վրա ուրվագծվում են հավասարաթև խաչի հետքերը։

4. Հեթում II (1289—1306). պղինձ, քարտեզ, քաշը 3,70 գ., տր. 24 մմ.։ Գտնվել է Ամբերդի պեղումների ժամանակ։ Դրամը Լենինգրադի էրմիտաժից 1962 թ. հանձնվել է Հայաստանի պատմության պետական թանգարանին (գույքամատյանի № 17917/46)։

ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱՒ[ՈՐ] [ՀԱՅՈՑ]
ԾՆՆԵԱ[Լ] [Ի] ԳԱՂԱԳՆ Ի ՍԻՍ

(Պտուկյան, № 1589)

5. Լևոն V (1374—1375). պղինձ, փող, քաշը 0-70 գ., տր. 14 մմ.։ Գտնվել է Անիի պեղումների ժամանակ 1910 թ.։ Պահվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում (պղնձյա դրամների գույքամատյանի № 5564)։

[ԼԵՒ]ՈՆ ԹԱԳԱՒ[ՈՐԻ]
ԱՄԵՆԱՅՆ ՀԱ[ՅՈՑ]

(Պտուկյան, առաջին երեսը № 2242, երկրորդը՝ № 2243)

Բացի վերը նկարագրված դրամներից Հայաստանի պատմության պետական թանգարանում պահվում է նաև Լևոն I օրոք դրվագված պղնձյա դրամ. դանգ, քաշը՝ 7,30 գ., տրամագիծը՝ 28 մմ.։ Գտնվել է 1911 թ. Նախիջևանի շրջանի Շահթախտ գյուղում։ 1939 թ. թանգարանին է նվիրել Պ. Մելիքյանը (գույքամատյանի № 14523)։

ԼԵՒՈՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ
ԾԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔ ՍԻՍԻ

(Պտուկյան, № 718)

Հետաքրքրական է նշել, որ դրամի վրա դրվագված փոքր ու մեծ խաչերի թևերը կետազարդ են։

Վերը նկարագրված դրամները գիտական շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ։

Կիլիկիայի հայկական պետության պատմական ընթացքը, վերելքի ու ծանր պահերի ժամանակահատվածներով, իր անմիջական արտացոլումն է գտել կիլիկյան դրամագործության և դրամաշրջանառության մեջ։ XIII դարում Կիլիկյան հայկական պետության տնտեսական զարգացման համար ստեղծվեցին բարենպաստ պայմաններ։ Այդ ժամանակաշրջանում ուժեղացավ նաև Եվրոպայի ու Ասիայի երկրների հետ Կիլիկիայի ապրանքափոխանակու-

---

9 Դրամը ուսումնասիրության համար մեզ տրամադրվեց 1984 թ. մայիսի 15-ին։ Այն իրենից ներկայացնում էր 3—4 մմ. հաստությամբ մետաղի կլորակ, որը ծածկված էր ժանգով և բավականին հաստ քայքայված շերտերով։ Մաքրումը տևեց 15 օր, որից հետո հնարավոր եղավ դրամը որոշել։

թյունը, հետևաբար անհամեմատ լայնացան Կիլիկյան հայկական դրամների շրջանառության սահմանները։ Այնպիսի առևտրաարդյունաբերական կենտրոններ, ինչպիսիք էին Այասը, Տարսոնը, Ադանան և այլն, դարձան միջանցիկ առևտրի հանդուցակետեր։

Քննարկվող դրամները գտնվել են ինչպես Հայկական ՍՍՀ տարածքից, այնպես էլ նրա մերձակա շրջաններից։ Այդ դրամներից միայն մեկն է արծաթյա, մնացածը տարբեր արժեքների պղնձյա միավորներ են՝ դանգ, քարտեզ, փող։ Սակայն Հայաստանում տարածված Կիլիկյան արծաթյա ու պղնձյա դրամների տոկոսային հարաբերությունների մասին խոսել ներկայիս տվյալներով հնարավոր չէ, քանի որ արձանագրված օրինակների ընդհանուր քանակը շատ քիչ է հիմնավոր հետևություններ անելու համար։

Ինչպես հայտնի է, պղնձյա դրամները թողարկվում էին ներքին շուկայի պահանջները բավարարելու համար։ Մեր կարծիքով, Կիլիկյան պղնձյա դրամների առկայությունը պատմական Հայաստանի հյուսիս-արևելյան տարածքում պատահական չէ։ Կարելի է ենթադրել, որ վերջիններս ներմուծվել են Հայաստան արծաթյա միավորների հետ և գրեթե հավասարազոր ընդունելի են եղել Հայաստանի շուկաներում։ Անկասկած, մեր այդ դիտողությունը չի կարելի ընդունել իբրև վերջնական եզրակացություն։ Միայն նոր նյութերի բազմակողմանի ուսումնասիրությունը կարող է հաստատել կամ ժխտել մեր նախնական այս ենթադրությունը։ XIII դ. Կիլիկյան հայկական արծաթյա դրամները տասնյակ հազարավոր օրինակներով հեղեղում էին միջազգային շուկաները և, հավանաբար, Հայաստանը չէր կարող դուրս մնալ դրամաշրջանառության այդ ոլորտից։ Մենք հեռու ենք այն մտքից, որ այստեղ տարածված են եղել հիմնականում Կիլիկյան պղնձյա դրամներ։ Սակայն առկա նյութը ևս չի կարելի անտեսել։

Այսօրվա տվյալներով Հայաստանում և Անդրկովկասում շրջանառության մեջ եղած դրամները վերաբերում են Կիլիկիայի հայկական պետության հինգ թագավորների՝ Լևոն I, Հեթում I, Լևոն II, Հեթում II և Լևոն V։ Վեց դրամներից չորսը վերաբերում են Կիլիկյան թագավորության առաջին չորս թագավորների դրվագումներին (1198 թ. մինչև XIV դ. սկիզբ), ընդգրկելով Կիլիկիայի այն ժամանակահատվածը, երբ երկիրը գտնվում էր ծաղկման շրջանում և մեծ համարում ուներ միջազգային առևտրական կյանքում։ Իսկ Այաս-Թավրիզ առևտրական ճանապարհը յուրատեսակ կապ էր Կիլիկիայի և Մեծ Հայաստանի միջև[10]։

Ուշագրավ է Լևոն V պղնձյա դրամը՝ գտնված Անիում։ Ինչպես հայտնի է, Լևոն V-ը գահակալեց շուրջ ինը ամիս և, բնականաբար, նրա թողարկած դրամները համեմատաբար շատ չեն։ Չնայած դրամի հայտնաբերման տեղը ստույգ հայտնի է, սակայն մանրամասնություններին տեղյակ չենք։ Այս դրամի հայտնաբերումը Անիում առաջին հայացքից անսպասելի է։ Մոնղոլական տիրապետության տարիներին առևտրական ճանապարհների ուղիները ենթարկվեցին էական փոփոխությունների։ Մեծ նշանակություն ստացավ Թավրիզ-Էրզրում-Տրապիզոն-Այաս ճանապարհը, որը բացասապես անդրադարձավ Հայաստանի վրա[11]։ Առևտրական ճանապարհների փոփոխումների հետևանքով ընկավ Անի-Էրզրում ուղղության նշանակությունը։ Իսկ XIII դ. վերջում Անին կորցրեց իր դերը իբրև միջազգային առևտրի հանգուցային կենտրոն[12]։ Այնուամենայնիվ, Լևոն V ներկայացվող պղնձյա դրամը փոքրիկ վկայություն է փաստելու, որ մինչև XIV դ. 70—80-ական թթ. Կիլիկյան դրամները ներմուծվել են Հայաստան։ Անկասկած, միայն նոր դրամագիտական նյութերի

---

[10] Я. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954, с. 287.

[11] Г. Г. Микаелян, նշվ. աշխ., էջ 352։

[12] Նույն տեղում։

հայտնաբերումը կբացահայտի Կիլիկյան դրամների տարածման ստույգ շրջանակները՝ ըստ տիրակալների թողարկումների։

Կիլիկիայի դրամների ուսումնասիրությունը՝ կապված Հայաստանի դրամաշրջանառության հարցերի հետ, ներկայացվում է առաջին անգամ։ Սակայն այն պրոբլեմային հարց է և մշակման կարոտ, քանի որ ներկայիս նյութը հնարավորություն չի ընձեռում անելու մեծ հետևություններ։ Մյուս կողմից, պետք է հիշել այն իրողությունը, որ պատմական Հայաստանի տարածքում XII—XIV դդ. հնավայրերը ուսումնասիրված են ոչ լրիվ և միայն դրանց մանրամասն քննությունը, նոր նյութերի հայտնաբերումը հնարավորություն կտա բացահայտելու Կիլիկիայի հայկական պետության և Հայաստանի տնտեսական ու քաղաքական կապերը՝ դրամագիտական տվյալներով։

ОБРАЩЕНИЕ АРМЯНСКИХ КИЛИКИЙСКИХ МОНЕТ В АРМЕНИИ

ГЕНРИХ САРКИСЯН, МАРГО КАРАПЕТЯН

Резюме

История монетного дела Киликийского армянского государства изучена сравнительно многосторонне и глубоко. Однако до последнего времени факт обращения киликийских армянских монет в Армении полностью отрицался.

На территории исторической Армении найдены шесть монет, которые введены в научный оборот впервые. Монеты найдены в Ани, Амберде, Мецаморе, Мегри и в селе Шахтахт (Нахичеванская АССР), представляя чекан царей Левона I, Гетума I, Левона II, Гетума II и Левона V.

Вопрос обращения киликийских армянских монет рассматривается впервые, однако, исходя из имеющегося материала, сделать выводы не представляется возможным. Лишь обнаружение новых материалов даст возможность наиболее полно представить экономические и политические связи Киликийского армянского государства и Армении по нумизматическим данным.